



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇՏԻՆՅԱՆԻ ՈՐ Բ ԱՍԱԾՆ Է ՃԻՇՏ

«Քաղաքացիական դայմանագիր» խմբակցության դասգամավոր, ԱԺ դաշնամուտային և անվանագրության հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը վերջերս ներկայացրել էր այն գինվորականների և բարձրաստիճան նախկին դաշնակցային անունները, որոնք, իր կարծիքով, վախենում են զալ ԱԺ ու մասնակցել 44-օրյա դաշտերակցի հանգամանքները բնորոշ հանձնաժողովի աշխատանքներին:



Այդ անձանց շարքում էին Տիրան Խաչատրյանը, ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը, Արցախի ՊԲ նախկին հրամանատար Զալալ Հարությունյանը, ԶՈՒ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանը: «Զինվորականներ կան, որոնք վախեցած են, օրինակ՝ Տիրան Խաչատրյանը, որը հրապարակայնորեն հրաժարվել է զալ նիստին:

Արտաքին քաղաքականության հարցերով են հրավիրել եմ Վարդան Օսկանյանին, որը հրաժարվել է, բայց մենք նորից կուղարկենք հրավեր. Արցախի հետ կապված լուսամտերի ժամանակ ինքը պետք է բարի լինի, գա, որովհետև շատ հարցեր առնչվելու են ԱԳՆ-ի իրականացրած քայլերին», - ասել էր Անդրանիկ Քոչարյանը: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրյանին: Վերջինս մեզ հետ զրույցում ասաց, որ հանձնաժողով գնալու հրավեր չի ստացել, բայց եթե ստանա էլ, չի գնալու:

«Պարոն Խաչատրյան, Անդրանիկ Քոչարյանը վերջերս հայտարարեց, որ կան գինվորականներ, որոնք չեն գալիս քննիչ հանձնաժողով, քանի որ վախենում են, թաքցնելու բան ունեն: Ղուք ես նրանց թվում էիք: Ինչպե՞ս կարծազանքեք այս հայտարարություններին, ինչու՞ չեք գնում քննիչ հանձնաժողով:

«Ես հրավեր չեմ ստացել, բայց եթե հրավեր ստանամ էլ, այդ հանձնաժողով չեմ գնալու: Մի անգամ հայտարարել եմ, հիմա

էլ կրկնում եմ՝ եթե վստահ լինեմ, որ կլինի անկողմնակալ, արդար քննություն, միայն այդ դեպքում կգնամ: Ես էլ եմ հետաքրքրված, ավելի՛ն՝ անհանգստացած այդ ամեն ինչում, որ պատերազմի հանգամանքները քննվեն:

«Այսինքն՝ կարծում եք, որ այդ հանձնաժողովն արդար քննություն չի իրականացնի, դրա համար եք հրաժարվում մասնակցել դրա աշխատանքներին:

«Ոչ թե կարծում եմ, այլ համոզված եմ չի կարող արդար քննություն լինել, դրա համար էլ չեմ գնալու:

«Պարոն Խաչատրյան, վերջերս Փաշինյանը հայտարարեց, որ բանակում 5-րդ շարասյուն է գործել, դրա համար էլ

պարտվել ենք 44-պատերազմը: Ձեզ համար հասկանալի էր՝ ում նկատի ունեք Փաշինյանը՝ 5-րդ շարասյուն ասելով, բանակում եղել է իսկապես 5-րդ շարասյուն:

«Զգիտեմ ում է նկատի ունեցել: Փաշինյանը լիքը բաներ է ասել, իր ո՞ր ասածն է ճշմարտություն եղել:

«Հ. Գ. Հիշեցնենք, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ֆինիչ հանձնաժողովը սեղծվել էր 2022 թվականի փետրվարին: Հոկտեմբերին հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացվեց եւս 6 ամսով:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ՀԱԿՈՒՅԱՆԸ ՉԻ ԳԱ

ՄՈՎՍԵՍ ՀԱԿՈՒՅԱՆԸ ՉԻ ԳԱ



ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, որը նաեւ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող խորհրդարանական հանձնաժողովն է ղեկավարում, վերջերս ներկայացրել էր այն գինվորականների եւ բարձրաստիճան նախկին պաշտոնյաների անունները, որոնք չեն ներկայացել քննիչ հանձնաժողով:

Սա Քոչարյանի՝ այս անձինք կաշակողված են, վախեցած են, քանի որ թաքցնելու բան ունեն, դրա համար էլ հրաժարվում են զալ ԱԺ:

Քոչարյանի թվարկած անձանց շարքում էին Տիրան Խաչատրյանը, ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը, Արցախի ՊԲ նախկին հրամանատար Զալալ Հարությունյանը, ԶՈՒ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը ԶՈՒ ԳՇ նախկին ղեկավար Մովսես Հակոբյանին հետաքրքրվեց՝ ինչու չի ներկայանում հանձնաժողով, եւ վերջինս ասաց, որ հանձնաժողով գնալու հրավեր չի ստացել, բայց ստանալու դեպքում էլ չի գնալու. «Ինձ հրավեր չեն ուղարկել: Ես բազմիցս ասել եմ՝ չեմ գնալու այդ հանձնաժողով»: Հարցում: Հարցում, պատասխանե՞ք կասկածում է հանձնաժողովի անաշարժությանը: Հակոբյանն ասաց. «Ես հավես չունեմ քննարկելու նրանց գործունեությունը, ինձ համար այդ հանձնաժողովը չկա»:

Ի դեպ, Զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, գեներալ-գնդապետ Օսիկ Գասպարյանը, որը պատերազմից հետո ԶՈՒ-ում Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով գործընթաց էր նախաձեռնել, մարտի 16-ին մասնակցել էր քննիչ հանձնաժողովի նիստին, ինչից հետո Անդրանիկ Քոչարյանը դրվատանքի խոսքեր էր ինչեցրել նրա հասցեին: Նա ավստանք էր հայտնել, որ Օսիկ Գասպարյանը գլխավոր շտաբի պետի պարտականություններին անցավ ավելի ուշ, քան պետք էր, այլապես ՀՀ ԶՈՒ բարեփոխումների մի մեծ ճանապարհ անցած կլիներ:

Թե ինչպես է ստացվում, որ Անդրանիկ Քոչարյանը գովեստի խոսքեր է «ջայլում» իրենց իշխանության հրաժարականը այն ժամանակ պահանջող Օսիկ Գասպարյանի հասցեին, Մովսես Հակոբյանը պարզաբանեց. «Լավ է արել. դա շատ ողջունելի է: Ինչ ուզում են՝ ասեն, ինձ հետաքրքիր չէ նրանց խոսքը»:

Ի դեպ, այս քննիչ հանձնաժողովի աշխատանքը բազմիցս է կասկածի տակ դրվել թե՛ հասարակական, թե՛ քաղաքական տարբեր շրջանակների կողմից, որոնք բոլորն էլ պնդում են՝ պատերազմի պարտության մեղավորները չեն կարող արդար քննություն իրականացնել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԻՆՉ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ Է ՏՎԵԼ ՊԱՏՔԱՄԱՎՈՐԸ

«Միջազգային աստիճանում Հայաստանի Հանրապետությունը դեմ է ճկուն դիվանագիտություն վարի, ընդ որում՝ բոլոր ուղղություններով դեմ է մեր կառուցող ամրապնդման՝ թե՛ արեւմտյան, թե՛ արեւելյան: Մենք դեմ է կարողանանք բոլորին մեզ դաժնակից դարձնել», - ասել է ՀՀ ԱԺ մարդու իրավունքների դաշնամուտային եւ հանրային հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը Երեւանի թիվ 104 հիմնական դպրոցի առակերտների հետ հանդիպմանը:

Պատգամավորն աշակերտների հետ խոսել է խորհրդարանի դերի եւ կարեւորության, ինչպես նաեւ խորհրդարանական դիվանագիտության եւ խմբակցությունների կողմից կատարվող աշխատանքների մասին:

Աշակերտների հարցին, թե ինչ գործողություններ են կատարվում սահմանամերձ գյուղերի բնակիչների եւ գերիների իրավունքների պաշտպանության հարցով, Թագուհի Թովմասյանը՝ որպես ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, պատասխանել է, որ

իր անմիջական հսկողությամբ աշխատանքներ են տարվում բոլոր ասպարեզներում եւ հիմնականում միջազգային հարթակում այս հարցերի բարձրաձայնման հետ կապված:

Հանդիպման ընթացքում աշակերտները խոսել են իրենց նախընտրած մասնագիտությունների մասին, ինչին ի պատասխան՝ պատգամավորը խորհուրդ է տվել աշակերտներին լավ սովորել, տիրապետել շատ լեզուների, որովհետեւ հիմա ավելի, քան երբեք, աշխարհի հետ առնչությունը շատ է:

«Եղե՞ք ակտիվ, նախաձեռնող, եւ դուք կունենաք ձեզ համար ձեր ոլորտում ցանկալի արդյունքներ: Պետք է լինել մրցունակ, իսկ մրցունակ կարող եք լինել միայն գիտելիքի շնորհիվ», - նշել է խորհրդարանականը:

Թագուհի Թովմասյանն անդրադարձել է նաեւ Հայաստանի անվտանգային հարցերին, ներկա խնդիրներին եւ դրանց լուծման հնարավոր ուղղություններին:

«Յուրաքանչյուր պետություն իր իսկ շահերից էլնելով պետք է գործի, ուստի էլ շատ կարեւոր է ճկուն դիվանագիտություն ունենալ», - ասել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը

«Բաց դաս» ծրագրի շրջանակում Արմվյանի բազմագործառնության պետական քոլեջի սաներին:

Հանդիպման ընթացքում աշակերտները հետաքրքրվել են Լաչինի միջանցքի բացման խնդրով: Պատգամավորը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը փորձում է դիվանագիտական եւ բացառապես խաղաղ ճանապարհով նպաստել խնդրի կարգավորմանը:

Աշակերտների հետ հանդիպմանը ներկա է եղել նաեւ Լույս խմբակցության պատգամավոր Ռուստամ Բաբոյանը: Նա խոսել է խորհրդարանի դերի, խորհրդարանական դիվանագիտության մասին: Անդրադառնալով կրթական ոլորտի կարեւորությանը՝ Ռուստամ Բաբոյանը աշակերտներին հորդորել է լավ սովորել եւ իրենց գործում լինել պրոֆեսիոնալ:

Այդ ընթացքում պատգամավորները խոսել են մեր երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության, ինչպես նաեւ տարածաշրջանային պետությունների քաղաքականության առանձնահատկություններին:

Հյուրերը եղել են ԱԺ թանգարանում եւ գրադարանում, ծանոթացել խորհրդարանի շենքի պատմությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՋԱՆՔԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

ԻՆՏԵՆՍԻՎ ԿՐԱԿՈՑՆԵՐ

«Թշնամին ավելի ինտենսիվ է դարձրել կրակոցները՝ ՀՀ սահմանին մահացու վիրավորելով հայ զինվորի, կրակ բացելով Արցախի խաղաղ բնակիչների վրա և կրկին արգելափակելով գազամատակարարումը դեպի Արցախ...»

Մարտի 22-ին Երասխի հատվածում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի կրակոցից հրազենային մահացու վիրավորում է ստացել զինծառայող Արշակ Սերյոժայի Սարգսյանը: Նույն օրը Արցախի ճարտար քաղաքի բնակիչներ Յ. Հարությունյանը, Ա. Ղահրամանյանը, Մ. Ջիվանյանը, Գ. Ղուկասյանը, Կ. Ղավթյանը, Ա. Աղամյանը և Դ. Ղավթյանը ճարտարի վարչական տարածքում գտնվող «Կլազին ձոր» կոչվող տեղամասում գտնվող խաղողայգիներում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս հայտնվել են ադրբեջանական զինուժի կողմից արձակված կրակի թիրախում:

Խաղողայգիներին հարակից ադրբեջանական մարտական դիրքերից քաղաքացիական անձանց ուղղությամբ հրաձգային տարբեր զինատեսակներով անկանոն կրակ է բացվել, ինչի հետևանքով դադարեցվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Ադրբեջանը միաժամանակ կրկին արգելափակել է Հայաստանից Արցախ մտնող միակ գազատար խողովակը:

Այսպիսով, Ադրբեջանը խախտում է թե՛ Նոյեմբերի 9-ի հայտարարության պայմանավորվածությունները, թե՛ միջազգային իրավունքի մի շարք սկզբունքներ ու նորմեր:

Հրատապ գրություններ են ուղարկել միջազգային բոլոր գործընկերներիս՝ ահազանգելով Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի կոպտագույն խախտումների մասին, խնդրելով ձեռնարկել բոլոր հնարավոր կանխարգելիչ միջոցները՝ զսպելու Ադրբեջանի հանցավոր գործողությունները:

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՎԹԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Աննա Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով առևտրային կազմակերպության ծառայող, զբաղեցնելով «Աջափնյակ» ԲԿ-ի թերապեւտ-թոքաբանի հաստիքը, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում և ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պարագայում Ռուդիկ Մխիթարյանին զորակոչից ազատելու նպատակով վերջինիս և նրա ընկեր՝ Հայկազ Գրիգորյանի դրամամբ, Հասմիկ Կարապետյանի հետ նախնական համաձայնությամբ, Ռուդիկ Մխիթարյանի օգտին թոքաբորբ հիվանդության բացակայության պայմաններում միասին կազմել են բուժման վերաբերյալ պաշտոնական կեղծ փաստաթղթեր, որոնք ներկայացվելով զինկոմիսարիատ՝ Ռուդիկ Մխիթարյանի զորակոչը հետաձգվել է:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ Տեղի ունեցած կառավարության նիստի ժամանակ անդրադարձավ ավելի քան երեք ամիս Երևանում Արցախի զազամասակարարման դարբերական անջատմանը: Նա շեշտեց, որ արդեն 13-րդ անգամ է Լեռնային Ղարաբաղը զրկվում կառույց վառելիքից, 44-օրյա դաժնաբանի հետևանքով հայաթափված Թալիբ Գյուլում սեփականության իրավունքով հայերին դատարանում սներ Ադրբեջանը քանդում է և փոխարենը կառուցում ադրբեջանցիների համար նախատեսված սներ:

Տեղի ունեցող Հայաստանի վարչապետ Ադրբեջանի կողմից իրականացվող էթնիկ զտման և ցեղասպան քաղաքականության հիմնարար, հիմնավոր ապացույց համարեց:

«Սրանով Ադրբեջանի ղեկավարությունը ցույց է տալիս «ինտեգրացիայի» իր մոդելը», - նկատեց վարչապետը՝ շեշտելով նաև՝ Բաքուն հիմնավորց հայկական կոթողների վրայից ջնջում է հայերեն արձանագրությունները և հարցը համարում լուծված: «Սրանք ապօրինի գործողություններ են և հակասում են 2020-ի Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 7-րդ կետին», - ասաց Փաշինյանը:

«Հիշեցնեմ 7-րդ կետում ասվում է՝ «ներքին տեղահանված անձինք և փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի վերահսկողության ներքո: Սա նշանակում է, որ մարտի 18-ը պետք է նշանավորեր հայ բնակչության Թալիշ վերադառնալով և ոչ թե նրանց տները քանդելու վանդալային ակտով», - նշեց գործադիր ղեկավարը:

Օրերս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն այցելել էր Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Թալիշ գյուղ, սպառնալիքներ հնչեցրել Երեւանի ուղղությամբ: «Հայաստանը պետք է Ղարաբաղը պաշ-



տոնապես ճանաչի Ադրբեջանի մաս», - ասել էր Ալիևը՝ հայտարարելով, թե միայն այդ դեպքում հայերը կարող են հանգիստ ապրել 29 հազար քառակուսի կմ տարածքում:

Վարչապետը հայտարարեց՝ ինչի մասին ահազանգում էր Երեւանը, արդեն իրականություն է: Ըստ Փաշինյանի՝ Ադրբեջանի ղեկավարությունը ցույց է տալիս Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների և անվտանգության երաշխավորման կամ, վարչապետի ձեռակերպմամբ, «ինտեգրացիայի» իր մոդելը: «Սեփականության իրավունքով հայերին պատկանող տները քանդել, դրանց փոխարեն կառուցել ադրբեջանցիների համար նախատեսված տներ, զուգահեռ հիմնավորց հայկական կոթողների վրայից ջնջել հայերեն արձանագրությունները և հարցը համարել լուծված»:

«Ադրբեջանի ղեկավարի՝ մարտի 18-ին ունեցած ելույթից կարելի է մեկ հիմնական ուղերձ դուրս բերել. նա բացահայտ, բառացի ասաց, թե Հայաստանը պետք է ընդունի Ադրբեջանի պայմանները և համաձայնի Ադրբեջանի պայմաններով ղեկավարվող իրականացնել, հակառակ դեպքում ոչ մի խաղաղության պայմանագիր չի լինելու: Սա բառացի մեջբերում է Ադրբեջանի նախագահի խոսքից: Սա այլ կերպ, քան ազ-

րենիայի ակտ Հայաստանի Հանրապետության նկատմամբ և բարձրագույն մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կոպիտ ոտնահարում, դժվար է որակել», - կառավարության նիստին ասաց Նիկոլ Փաշինյանը:

Արցախի Նորանշանակ պետնախարար Գուրգեն Ներսիսյանը երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, հայտարարեց, որ միայն տեղական հարկային եկամուտները կրճատվել են 70 տոկոսով:

«Մի կողմից Ադրբեջանը միջազգային հանրության հետ շփումներում փորձում է ներկայանալ որպես խաղաղասիրական մոտեցումների կողմնակից, բայց, դրան զուգահեռ, Արցախում և արցախցիների նկատմամբ Ադրբեջանն իրականացնում է էթնիկ զտման ուղղված քաղաքականություն», - ասաց Ներսիսյանը:

Այս ամենը հաշվի առնելով՝ Արցախի պետնախարարը անխմաստ է համարում ադրբեջանցիների հետ համատեղ բնակվելու և տեղահանված արցախցիների՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներ վերադարձի մասին հայտարարությունները, իսկ նման հայտարարություն ավելի վաղ Հայաստանի վարչապետն էր արել:

ՆԱԽՐԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ԿԿԱՏԱՐԻ

Մարտի 27-31-ն ՀՀ Ան քարտուղար Արմեն Գրիգորյանն աշխատանքային այց կկատարի Լատվիայի Հանրապետություն, Լիտվայի Հանրապետություն և Էստոնիայի Հանրապետություն:

Հայաստանի անվտանգության խորհրդի գրասենյակից հայտնում են, որ այցի շրջանակներում Ան քարտուղարն աշխատանքային հանդիպումներ կունենա Ռիգայում, Վիլնյուսում և Տալլինում:

ԱՅՑԵԼԵԼ Է ԶՈՐԱՄԱՍ

Մարտի 23-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն այցելել է հանրապետության N գործադիր մարման ենթակա գործամասերից մեկը:

Պաշտպանական գերատեսչության ղեկավարը ողջունել է մարտական հերթապահության պատրաստվող անձնակազմին, մաղթել անվտանգ և զգոն ծառայություն:

Սուրեն Պապիկյանը զինծառայողներին հորդորել է խստագույնս հետևել անվտանգության կանոններին, ինչպես նաև ուշադրություն ու բարձր կարգապահությամբ կազմակերպել ծառայությունն ու

մարտական հերթապահությունը, հատկապես՝ անբարենպաստ եղանակային պայմաններում:

Նախարարը իրամասնատարական կազմին տվել է համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ:

Այնուհետև պաշտպանության նախարարն առանձնազրույցներ է ունեցել գործադիր սպաների հետ, լսել բարձրացված հարցերը, ներկայացրել ԶՈՒ բարեփոխումների ընթացքը:

ՀԵՏ ԵՆ ԿԱՆՉԵԼ

Նիդերլանդների արտգործնախարարությունը գերատեսչություն է կանչել Ադրբեջանի դեսպանին և նրան հայտնել Արդարադատության միջազգային դատարանի որոշումը կատարելու և Լազիկի միջանցքը բացելու անհրաժեշտությունը:

Ըստ հաղորդագրության՝ Նիդերլանդների արտաքին գերատեսչության ղեկավարը բազմիցս իր մտահոգություններն է բարձրացրել Լազիկի միջանցքի արգելափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար իրավիճակի առնչությամբ, այդ թվում՝ Ադրբեջանի իշխանությունների հետ երկկողմ բանակցություններում, ինչպես նաև Նիդերլանդների վարչապետի և Ադրբեջանի նախագահի միջև վերջինս կայացած հանդիպման ընթացքում: FAON-ը նշում է, որ Նիդերլանդների արտգործնախարարն այդ մտահոգությունները փոխանցել է նաև Ադրբեջանի իր գործընկերոջ հետ մի քանի գրույցներում: Այդ մտահոգություններն արտահայտվել են նաև տարբեր միջազգային համաժողովների ընթացքում, ԵՄ հայտարարությունների միջոցով:

Նիդերլանդների արտգործնախարար Յոկստրան նշել է, որ դատարանի որոշումը պետք է լիարժեք կատարվի, ինչը նշանակում է, որ Ադրբեջանը պետք է ապահովի մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների ազատ տեղաշարժը Լազիկի միջանցքով՝ երկու ուղղություններով:

Ո՞Վ Է ԳԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ

Ապրիլի 3-5-ը Հայաստանի Հանրապետություն կժամանի Խորվաթիայի խորհրդարանի Խորվաթիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Դավոր ԻՎՈ ՇՏԻՈՒ գլխավորած պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակությանը կղկնավորի «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի ՀՀ պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:



ՅԵՐԹԱԿԱՆ ԲԱՅԱՐԱՅՏՈՒՄ

ԹՄԲԱՆՅՈՒԹԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԻՐԵՐ

ՀՀ ԲՆՆՅԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՔԲԿ ՄՐԱՔԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՐԶԱՆԻ ԲՆՆՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԲՆՆԻՅՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՒ ԽԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՎԱՐՈՒՔԱՅԻՆ ԵՒ ԱՊԱ- ԳՈՒՑՈՂԱԿԱՆ ԾԱՎԱԿՐԱՆ ԳՈՐԾՈՂՈՒՅՈՒՆ- ԳՆԵՐԻ, ՈՍՏԻԿԱՆՈՒՔՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՊԵՐԱՏԻՎ-ԽԵՏԱ- ԽՈՒԱԿԱՆ ԱՄԻՋՆԱԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆ- ԲՈՒՄ ԱՄ ԲԱՆԻ ԱՆՃԱՆԳ ԳՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒ- ՔՅԱՄՔ ԻՐԱԳՄԱՆ ԳՈՒՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՃ- ԳՆԱՊԵՆ ԽՈՒՐ ՆԱԿԻՆՈՎ ՔՈՐԱՄԻՋՈՑԳՆԵ- ՐԻ ԱՊՈՐԻՆԻ ԵՐԶԱՆԱԾՈՒՔՅԱՆ ԴԵՊՒ Է ԲԱԳՏԱԽԱՅՎԷ:



Մասնավորապես, 2023թ. մարտի 14-ին՝ ժամը 23:30-ին, Երեւան քաղաքի Նալ- բանդյան փողոցում թմրամիջոցներ ապօր- ինի ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով «Հյունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենայում հայտնաբեր- վել եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արաբկիրի բաժին է տեղափոխել Երեւան քաղաքի 39-ամյա բնակիչ:

Եւ 396-րդ հոդվածի 1-ին մասով, նախա- ձեռնվել են քրեական վարույթներ, որոնք միացվել են: Դեպքի վայր հանդիսացող հիշյալ հյուրանոցային համալիրում կա- տարված խուզարկությամբ հայտնաբեր- վել են մեծ քանակությամբ տարբեր տեսա- կի թմրամիջոցներ եւ թմրամիջոցներ պատ- ռաստելու իրեր: Մասնավորապես՝ հայտ- նաբերվել են տարբեր սրվակներում, փա- թեթներում լցված 32.81 գրամ ընդհանուր քաշով Մեթամֆետամին, 31.12 գրամ ընդ- հանուր քաշով Մարիխուանա, 26.25 գրամ ընդհանուր քաշով Հերոին տեսակի թմրա- միջոցի նմանվող զանգվածներ, չօգտա- գործված ներարկիչներ, կաթոցիչներ, էլեկտրոնային կշեռքներ, «Ջիպ» փակա- նով դատարկ փաթեթներ, այրված եւ սպի- տակ գույնի զանգվածի հետքերով երկա- թե շերտի, թմրամիջոց պատրաստելու համար նախատեսված կիսով չափ լցված բժշկական սպիրտի տարրա, թորած ջրով ապակյա սրվակ եւ այլն: Հայտնաբերվել են նաեւ քջջային հեռախոսներ եւ համակար- գիչ: Հայտնաբերված զանգվածների բա- դադրությունը պարզելու նպատակով Նշա- նակվել են դատաքիմիական եւ դատա- յուրափաստական փորձաքննություններ: Հայտնաբերված մի քանի փաթեթների պարունակության վերաբերյալ Նշանակ- ված փորձաքննության նախնական եզրա- կացությունների համաձայն՝ դրանք եղել են Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Քննության ընթացքում ձեռք են բերվել տվյալներ այն մասին, որ, որպես թմրամի- ջոցների ապօրինի շրջանառության մի- ջոց, Նշված անձինք օգտվել են «Տելեգ- րամ» հավելվածի՝ թմրամիջոցների եւ հո- զեմետո կոյուրների առցանց վաճառքի հայտ- նի հարթակներից, իսկ հյուրանոցային քո- թեջը, որը վարձակալվել է Նշված անձան- ցից մեկի կողմից, որոշակի ժամանակա- հատվածում առեւտույթ ծառայեցվել է որ- պես թմրամիջոցների պատրաստման, իրացման նպատակով փաթեթավորման տարածք, որտեղ հյուրանոցի աշխատա- կիցներին թույլ չի տրվել ներս մտնել: Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ 39-ամյա տղամարդուն մեղադ- րանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3- րդ կետով, իսկ 1984թ. ծնված երկու ան- ձանց՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կե- տով: Երկուսի նկատմամբ խափանման մի- ջոց է ընտրվել կալանավորումը, իսկ մեկի մասով դատարանը մերժել է խափանման միջոց կալանավորումն ընտրելու քննիչի միջնորդությունը: Քննչական մարմնի եւ Ոստիկանության ծառայողների կողմից համագործակցված միջոցառումները շա- րունակվում են թմրամիջոցառումների ապօրի- նի ձեռք բերման աղբյուրը, շրջանառու- թյան շղթայում ներգրավված անձանց ամ- բողջական շրջանակը պարզելու նպա- տակով:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՔԵՐԹ ԵՒ ՄԻՍ

ՀՀ Ազգային ժողովը շարունակում է քննարկել «Հայաստանի Հանրապետու- թյան կառավարության ծրագրի (2021- 2026 թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» գե- կույցը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկա- ցավ, որ այդ գեկույցի քննարկման հա- մար մարտի 24-ին խորհրդարան կգան եւ արտաքին հարաբերությունների մշ- տական հանձնաժողովի նիստին կմաս- նակցեն արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ու իրավական հարցերով մշտական ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Զեկույցում ար- տաքին մարտահրավերներին ամենա- մեծ տեղն է հատկացված, եւ հենց առա- ջին նախադասությունում կարդում ենք. «2022 թվականի արդյունքներով՝ Հա- յաստանի Հանրապետության կառավա- րության գործունեության առանցքային մարտահրավերը շարունակում է մնալ արտաքին անվտանգության ապահո- վումը:

Աշխարհաքաղաքական խորացող անկայունությունը, աշխարհակարգի եւ միջազգային անվտանգության ոլոր- տում ակնհայտ դարձող անորոշու- թյուններն ու լարվածություններն ավելի են սրում Հայաստանի Հանրապետու- թյան արտաքին անվտանգության սպառնալիքները», - գրված է գեկույ- ցում: Մենք տեղեկացանք, որ տնտեսա- կան հարցերի հանձնաժողովն էլ ար- տաքին նիստ կգումարի մարտի 27-ին: Այնտեղ առողջապահության հարցերի փոխնախարար Լենա Նանուշյանը կներկայացնի մի նախագիծ, որը վերա- բերում է արտադրական կանեփին:

Մասնավորապես, ամրագրվելու է, որ արտադրական կանեփի արտադրու- թյան, արտահանման, ներմուծման եւ մեծածախ առեւտրի լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները լիցեն- զավորման կարգով սահմանված տա- րածքներում պետք է ապահովեն տե- սաձայնագրող սարքերի առկայությու- նը, ինչպես նաեւ տեսաձայնագրող սարքերի ծայնագրությունների պահ- պանումը առնվազն 6 ամիս ժամկետով վերահսկողության շրջանակներում վե- րահսկողություն իրականացնող պետա- կան մարմինների պահանջով այն ներ- կայացնելու համար:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՂԱԳՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԳՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արման Ժամիարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, ՀՀ վճռաբեկ դա- տարանի նախագահի 2017 թվականի օգոստոսի 25-ի թիվ 52-Ս հրամանով զբաղեցնելով ՀՀ Տավուշի մարզի առա- ջին ատյանի ընդհանուր իրավասու- թյան դատարանի աշխատակազմի ղե- կավարի պաշտոնը, հանդիսանալով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառնություններով օժտված պաշտոնատար անձ, իր ծա- ռայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփութ վերաբերմունքի հետեւան- քով դրանք չի կատարել, որն անզգուշ- ությամբ էական վնաս է պատճառել պե- տության օրինական շահերին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԱԳՆԻՏԵ ԳՆԴԻԿՆԵՐ՝ ՈՐՈՎԱՅՆՈՒՄ

3 տարեկան երեխայի ծնողները դիմել են «Մուրացան» համալսարանական հի- վանդանոց՝ Նշելով, որ երեխան խաղալիս է եղել մագնիսե գնդիկներով, իսկ որոշ ժամանակ անց նկատել են դրանց մեծ մա- սի բացակայությունը: Համալսարանական կլինիկայում կատարվել է վիրաբույժի գն- նում. որովայնը եղել է պալպատոր փա- փուկ, փսխում չի դիտվել, գանգատներ չի Նշվել:

որոնք հեռացվել են, պերֆորացված հատ- վածների ամբողջականությունը՝ վերա- կանգնվել:

Հետվիրահատական ընթացքը անցել է հարթ, երեխան դուրս է գրվել լավացու- մով:

Սիրելի՜ ծնողներ, այս եւ նման այլ օրի- նակները մեր պրակտիկայում շատ են:

Հորդորում ենք լինել առավել ուշադիր եւ երեխաներին գեթ պահել առողջու- թյան կամ կյանքի համար սպառնալիք հանդիսացող մանր դետալներ պարունա- կող խաղալիքներով, իրերով խաղալուց:

ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա՝ Քննչական կոմի- տեի Երեւան քաղաքի քննչական վարչու- թյունում նախաձեռնված քրեական վա- րույթի շրջանակներում իրավապահները մարտի 21-ին խուզարկություն են կատա- րել Երեւանի 43-ամյա բնակչի ընտանի- քին պատկանող ձեռնարկատիրական

տարածքում: Խուզարկությանը, բացի ոս- տիկանության եւ Քննչական կոմիտեի ծա- ռայողներից, մասնակցել են Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգու- թյան դեմ պայքարի վարչության շնագի- տական կետորնի ծառայողները:

Հայտնաբերվել են մեծ քանակությամբ թմրամիջոցներ, մասնավորապես՝ 23 գրա- մից ավելի Կոկաին, 627 գրամից ավելի Մեթամֆետամին, 1 կգ 435 գրամ Մարի- խուանա, 237 գրամ Էքստազի, 8 գրամից ավելի Հերոին, Հաշիշի յուղ, Ափիոն, Մե- թադոն եւ այլ թմրամիջոցներ:

Հայտնաբերվել են նաեւ տարբեր տեսա- կի մեծաքանակ հոգեմետ դեղահաբեր, այդ թվում՝ Սուբուտեքս, Պրեգաբալին, Դիագեպամ, Լորագեպամ:

Իրավապահները հայտնաբերել են նաեւ մարտական ատրճանակ, հրացան եւ օդանձնիչ ատրճանակ, 51900 դոլար եւ 187700 Եվրո, ոսկյա մատանիներ եւ շո- թաներ, ոսկե մետաղադրամներ, ոսկու ծուլակտորներ եւ ադամանդե քար: 43- ամյա տղամարդը ձերբակալվել է: Հան- գամանքները նախաքննությամբ պարզ- վում են:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացա- հայտվել է հանցագործության 88 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

Փրկարար ծառայողները կարող են ատեստավորվել, ստանալ հավելավճար: Օրենսդրական նախաձեռնությունն ընդունվել է կառավարության այսօրվա նիստի ժամանակ: Փրկարար ծառայության ծառայողների ատեստավորման նոր համակարգով համապատասխան ծառայողների համար կհաշվարկվի հավելավճար:

Ծառայողը համարվելու է ատեստացիան անցած այն պարագայում, երբ, նախ, հաջողությամբ հաղթահարել է ընդհանուր զարգացածության թեստը, այնուհետև ֆիզիկական պատրաստականության վարժությունները, ապա մասնակցելով բուն մասնագիտական գիտելիքների ստուգման թեստին՝ նախատեսված 50 հարցերից 30-ին կամ 60 տոկոսին տվել է ճիշտ պատասխան:

Փրկարար ծառայությունում ղեկավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, բացի նշված փուլերից, անցնելու են նաև հարցազրույց ղեկավարման հիմնությունները լրացուցիչ ստուգելու նպատակով:

Եռամյա ժամկետի ընթացքում ատեստավորման չդիմելու կամ ատեստացիայի անցողիկ շեմը չհաղթահարելու դեպքում ծառայողները, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով, ենթակա են Փրկարար ծառայությունում ծառայությունից ազատման:

Առաջին ատեստավորումը չհաղթահարելու դեպքում ծառայողին եռամյա ժամկետում մեկ անգամ տրվելու է վերապատրաստվելու հնարավորություն, իսկ ատեստացիան առաջին անգամ հաջող չհանձնելու դեպքում ծառայողը կստանա առնվազն ես երկու հնարավորություն:

Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունքը պահպանվում է 3 տարի, որը շարունակելու համար ծառայողը կրկին պետք է ատեստավորվի:

ՆՈՐ ՎԱՐԿ

Կառավարությունը նոր վարկ կվերցնի՝ 92 մլն եվրո արժողությամբ: Պայմանագիրը կստորագրվի Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման քաղաքականության վարկ» անվամբ: Բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են 2023 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը: Որոշման նախագծի հիմնավորմամբ՝ վարկային միջոցների ժամանակին ստացումը կարելու է նշանակություն ունի պետական բյուջեի կատարողներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից: Ծրագրի շրջանակը, մասնավորապես, ներառում է՝ Կլիմայի փոփոխության մեղմացման եւ հարմարվողականության խթանում եւ շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում, Հավասարության ամրապնդում եւ մարդկային կապիտալի զարգացման խթանում, Հակակոռուպցիոն շրջանակի եւ արդարադատության ոլորտի արդյունավետության հզորացում:

Ն. ՀՈՎՀՅԱՆՆԻՍՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԿԱՆԵԼԻ ՄԱՐԴ ԶԷ

Ինչդեռ արդեն հայտնի է, իբրև ՔՊ խմբակցությունը Մարդու իրավունքների դաժնության թափուր դաժնում կառաջադրի գլխավոր դասախազի սեղակալ Անահիտ Մանասյանի թեկնածությունը, որը նաև դասախազի մեծիմ ընկերուհին է: ArmLur.am-ի հեռուգրույցում ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանն ընգծում է՝ իբխանության ՄԻՊ թեկնածուին ոչ ոք չի ճանաչում, հասարակության համար ընկալելի կերպար չէ, նրան ընկալում են միայն որդես ֆաղափական քիմի անդամ. «Այն, որ իմիջ գլխավոր դասախազի սեղակալն է, Մանասյանի կամ օրենքի խախտում չէ. որեւէ խնդիր չէր լինի, եթե թեկնածուն հայտնի լիներ իր իրավադաժնային գործունեությամբ եւ վստահություն վայելեր հասարակության կողմից: Գա սահմանադրական դաժանք է, քննադատվել չէ: Մանասյանի կամ դաժանքն ունի շատ խոր արմատ, այն է՝ եթե այդ անձը հայտնի է ու վայելում է հանրության վստահությունը, այսօրվա ճիշտ անկախության երաշխիք է ձեռք բերում, ինչն ամենակարեւորն է ՄԻՊ-ի համար»,- ասում է Ալավերդյանը:



Իմ օրինակով կարող եմ ասել՝ լինելով ՀՀ առաջին ՄԻՊ՝ իշխանությունների կողմից քաղաքական հետապնդման էի ենթարկվում, ինձ համար կարելու էր հասարակության վստահությունը, իսկ հասարակությունն ինձ վստահում էր, եւ երբ ակնարկում էին՝ արդյոք չեմ ուզում հրաժարական տալ, պատասխանում էի՝ իհարկե ոչ. ես հասարակության կողմից վստահություն եմ վայելում, պատասխանատվություն եմ կրում նրանք առաջ»,- ասում է Լարիսա Ալավերդյանը: Նշենք նաև, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ Անահիտ Մանասյանի հայրը «Իզմիրյան» ԲԿ-ի անսթեթիզիոլոգն է՝ Արտյոմ Մանասյանը: Ի դեպ, Անահիտ Մանասյանը ՍԴ նախկին

նախագահ Գագիկ Հարությունյանի «աջ ձեռքն է եղել»: Նա 2009-2013թթ. եղել է այդ ժամանակ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանի օգնականը, 2014թ.-ին՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդակցական, 2014թ.-ից 2016թ. դեկտեմբեր՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդակցական, 2016թ. դեկտեմբերից 2018թ. մարտ եղել է ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդակցական: Ստացվում է՝ նախկին իշխանության կարկառուն ներկայացուցիչ Անահիտ Մանասյանն այժմ դարձել է ՔՊ-ի ՄԻՊ թեկնածուն: Ինչպես է դարձել վստահելի՞ դժվար է ասել:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՈՇՏ ԲՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանի կողմից ներկայացրած «Շտապօգնություն բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթը քննադատության է արժանացել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծական վարչության կողմից: Նախ՝ նշենք, որ Բաթոյանը Սոնա Ղազարյանի եւ Ծովիկար Վարդանյանի հետ համատեղ ներկայացրած նախագծում առաջարկում է ամրագրել զուգընկեր հասկացությունը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ «զուգընկեր» հասկացությունն օրենքով սահմանված չէ, եւ օրենքի գործողության շրջանակից դուրս է մնում հաճախ ընտանեկան բռնության սուբյեկտ հանդիսացող անձը: Ընդ որում՝ բռնությունը գործարկվում է զուգընկերոջ նկատմամբ վերահսկողություն, ուժ, իշխանություն եւ ազդեցություն կիրառելու նպատակով, ինչը հնարավոր չէր լինի, եթե բռնության ենթարկված զուգընկեր հանդիսացող անձը, լինելով հաստատված հարաբերություն-

ների բնույթից (մտերիմ, ընկերական, սեռական), չունենար որոշակի կախվածություն բռնություն գործարկած անձից:

Այսպիսով, նախագծում ԱԺ փորձագիտական եւ վերլուծական վարչությունը մի շարք խնդիրներ էր հայտնաբերել: Օրինակ՝ նախագծում ֆիզիկական բռնության վերաբերյալ նշում կատարելիս կիրառվում են «անձի կամքին հակառակ» եւ «բռնի» հասկացությունները՝ որպես արարքը որոշակիացնող հատկանիշներ: Եվ, ահա, վարչությունը գտել է, որ ընտանեկան բռնության տեսակ համարվող սեռական, հոգեբանական եւ տնտեսական բռնի արարքների դեպքում այդ հատկանիշների միաժամանակյա կիրառությունը բացառվում է, եւ այդ պատճառով նրանք առաջարկում են այդ հոդվածը չկիրառել:

Առհասարակ, նրանք հանգել են եզրակացության, որ նախագծով նախատեսված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

Կառավարությունը «Վարժական հավաքներ հայտարարելու մասին» որոշում է ընդունել:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի ընդունումը պայմանավորված է պահեստազորի առաջին խմբում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների ռազմական հիմնությունների կատարելագործման, վերապատրաստման եւ պատրաստման վարժական հավաքների անցկացման անհրաժեշտությամբ:

Վարժական հավաքներին կներգրավվեն մինչեւ 953 քաղաքացու, որոնցից 476-ը՝ կրտսեր ենթասպայական եւ շարքային կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 452-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

Այսպիսով, նախատեսվում է 2023թ. ապրիլի 15-ից մինչեւ հունիսի 15-ը անցկացնել պահեստազորայինների վարժական հավաքներ, սահմանվում են վարժական հավաքների անցկացման նպատակները, ներգրավվող պահեստազորայինների կազմերը, ընդհանուր քանակները եւ մասնագիտությունները, յուրաքանչյուր մասնագիտությամբ հավաքների ժամկետները եւ պահեստազորայինների քանակները:

Հայտարարվող վարժական հավաքների ծախսերն իրականացվելու են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախարարության այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀՅԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 5 ՃՏՊ. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «Անիվ» հիմնադրամը սկսել է համագործակցությունը «Մատենա» միջազգային բիզնես դպրոցի հետ: Համագործակցության շրջանակում «Անիվ» հիմնադրամը կրթաթոշակներ կտրամադրի կրթության, գիտության և մշակույթի ոլորտի մասնագետներին: Այդպիսով, նշված ոլորտների մասնագետները կարող են մասնակցել «Մատենա»-ի ուսումնական ծրագրերին՝ վճարելով վարձի ընդամենը 7%-ը. 93%-ը կտրամադրի «Անիվ» հիմնադրամը՝ որպես կրթաթոշակ:

Կրթաթոշակների համար կարելի է դիմել մայիսի մեկնարկով «Թիմերի և մարդկանց առաջնորդում» և «Ռազմավարական պլանավորում և բիզնեսի զարգացում» ուսումնական ծրագրերին մասնակցելու համար: Կրթաթոշակի տրամադրման մասին որոշումը կկայացնի «Մատենա» բիզնես դպրոցի և «Անիվ» հիմնադրամի համատեղ հանձնաժողովը՝ հիմք ընդունելով դիմորդի մոտիվացիոն և անվանը և բանավոր գրույցը:

«Կարելի է ամառը անցկացնել դերը համակարգերի զարգացման գործում, ինչպես նաև գնահատելով այդ նպատակին ուղղված մեր բարձրակարգ կրթական ծրագրերը՝ «Անիվ» հիմնադրամը պատրաստակամություն հայտնեց տրամադրել կրթաթոշակներ մեր լավագույն դիմորդներին: Շնորհակալություն ենք հայտնում հիմնադրամի ղեկավարությանը՝ մեզ վստահելու և Հայաստանում որակյալ կրթությունը հասանելի դարձնելու կարեւորագույն առաքելությանը միանալու համար», - նշեց «Մատենա» դպրոցի տնօրեն Ռուբեն Հայրապետյանը:

«Մենք հասկանում ենք, թե ժամանակակից աշխարհում որքան կարեւոր է առաջատար գիտելիքների մատչելիությունը: Բարձր որակավորում ունեցող կադրերի նախապատրաստումը ցանկացած երկրի մրցունակության և զարգացման հիմքն է: Մեր ֆինանսական աջակցությունը նոր հնարավորություններ է բացում մասնագետների առաջ, որոնք ձգտում են ստանալ որակյալ կրթություն և բացահայտել իրենց ներուժը», - ասում է «Անիվ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արտեմ Կոնստանդյանը:

«Մատենա» բիզնես դպրոցի ծրագրերը նախատեսված են միջին և բարձր օղակների ղեկավարների համար, որոնք ձգտում են կատարելագործել իրենց մասնագիտական և առաջնորդային հմտությունները: Կրթության ձեւաչափը հնարավորություն է տալիս, համագործակցելով համաշխարհային հեղինակավոր հաստատությունների հետ, համադրել տեղական և միջազգային փորձը, ներգրավել Հայաստանի և արտերկրի փորձագետներին: Ծրագրերի փորձագետներն առաջատար մասնագետներ են, որոնք ունեն ղեկավար աշխատանքի և դասավանդման բազմամյա փորձ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ

542 ՄԼՆ ԳՐԱՄԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ ղեկավար վերահսկողական ծառայությունում ամփոփվում են ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա Սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության կողմից ՀՀ առողջապահության նախարարությունում իրականացված՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար և արժույթի դրամային գործակալությունում (ՊԱԳ) արձանագրվել են բազմաթիվ ընթացակարգային քերականներ և բացթողումներ, որոնք հանդիսանում են մի շարք դրամային անվճար կողմից առկա ոչ արդյունավետ կառավարման և աշխատանքային գործառնությունների ոչ դրամային կառավարման արդյունք:

Այսպիսով, արձանագրվել է, որ ԱՆ պետական առողջապահական գործակալության կողմից իրեն տրված համակարգման և վերահսկման գործիքակազմի ոչ պատշաճ կիրառման կամ չկիրառման պայմաններում ՀՀ-ում գործող մի շարք բժշկական կազմակերպություններ 2020-2021թթ. ընթացքում փոխհատուցման են ներկայացրել պետական պատվերի շրջանակներում չփոխհատուցվող կամ ավելի ցածր արժեքով փոխհատուցման ենթակա բժշկական ծառայությունների մատուցման դեպքեր և դրանց դիմաց պետական բյուջեից ստացել գումարներ, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի վնաս:

Մասնավորապես. 1. «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 140.529.497,0 ՀՀ դրամի խախտումներ, որից ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 32.661.600,0 ՀՀ դրամ, իսկ քաղաքացիներին է վերադարձվել ընդհանուր



12.791.38,0 ՀՀ դրամ գումար: Ուսումնասիրությամբ վեր հանված մի շարք փաստերով ՀՀ ընկերության կողմից նախաձեռնվել է քրեական վարույթ:

2. «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 119.343.340,0 ՀՀ դրամի խախտումներ: ՀՀ գլխավոր դատախազությունն ուղարկված տեղեկանքում արձանագրված փաստերով ՀՀ ընկերության կողմից նախաձեռնվել է քրեական վարույթ:

3. «Արաբկիր բժշկական կենտրոն ԵՂԱԻ» ՍՊ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 80.828.110,0 ՀՀ դրամի խախտումներ, որից ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 79.800.410,0 ՀՀ դրամ, իսկ քաղաքացիներին վերադարձվել է ընդհանուր 895.100,0 ՀՀ դրամ:

4. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 97.835.100,0 ՀՀ դրամի խախտումներ: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկանք է կից նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն իրավական գնահատական տալու և հետագա ընթացքը լուծելու համար:

5. «Վ.Ա. Ֆանարյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 48.786.750,0 ՀՀ դրամի խախտումներ, որից

ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 6.098.369,0 ՀՀ դրամ, ինչպես նաև կազմվել է ժամանակացույց արձանագրված խախտումների մասցած գումարը 8 ամիսների ընթացքում ամբողջությամբ ՀՀ պետական բյուջե վերականգնելու համար:

6. «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում արձանագրվել են ընդհանուր 53.757.220,0 ՀՀ դրամի խախտումներ: Վերահսկող օբյեկտի հետ կազմվել է ժամանակացույց արձանագրված խախտումների գումարը 12 ամիսների ընթացքում ամբողջությամբ ՀՀ պետական բյուջե վերականգնելու նպատակով:

Արձանագրված խախտումների կրկնության դիմաց Պետական առողջապահական գործակալությունում և բժշկական հաստատություններում նվազագույնի հասցնելու և հետագայում բացառելու նպատակով ծառայության կողմից պատրաստվում է առաջարկությունների ծավալուն փաթեթ՝ ներկայացնելու ՀՀ վարչապետին, ինչպես նաև ծառայության ղեկավարի նոր հանձնարարագրի հիման վրա ծառայությունը շուտով կմեկնադրվի հերթական վերահսկողական գործառնությունների իրականացումը Պետական առողջապահական գործակալությունում և պետական պատվերի խոշորագույն մասնաբաժին ունեցող մի շարք բժշկական հաստատություններում՝ հանդիպակց ուսումնասիրությունների ձեւաչափով:

ՄԱՐԳ

ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍԵԼ

Վրաստանի իշխանությունը տարիներ շարունակ Ղեբեղ գետի ձախ՝ վրացական ափը ամրացրել է՝ ափից քիչ հեռու տեղադրելով բազալտե մեծ ժայռաբեկորներ, իսկ գետի անվիջական ափին՝ մեծ քանակությամբ փոքր քարակտորներ: Այդպիսով ամսին սարերի ձյունը հալվում է, Ղեբեղ գետը վարարում է. այն, հանդիպելով ամրացված վրացական ափին, մղվում է դեպի աջ՝ անպաշտպան հայկական ափը՝ քշելու անվտանգ հողատարածքներ: 2010թ. գարնանը Ղեբեղը Նոյեմբերյան համայնքի Ղեբեղավան գյուղից քշելու արդյունք է 2,8 հեկտար տարածք, որից 7 հազար քառակուսի մետրը Ղեբեղավանի բնակիչ Ալեքսեյ Մելիքետյանի դեղձի այգին էր: Մոտ 10 տարի առաջ սահմանագծման հարցերով հայ-վրացական հանդիպում է եղել, որի ժամանակ հայ գիտնականներից մեկը, ցույց տալով քարտեզը, ապացուցել է, որ Ղեբեղի հունը փոխվելու հետևանքով գետը մոտ 70 մետր խորացել է հայկական տարածքում, այդքան չափով Հայաստանի Հանրապետության տարածքը փոքրացել է: Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքում Ղեբեղավանի ներքին մասում, հողից ու քարերից պատնեշ կար, որը փակում էր վարարած գետի ընթացքը: Տարիների ընթացքում այն մաշվել է, մի մասն է պահպանվել: Ղեբեղի վարարումների, գետի հունը դեպի Հայաստան փոխվելու հետևանքով պատնեշն ամբողջությամբ գտնվում է Վրաստանի տարածքում, վրացիները քարերով ամրացրել են այն: 2019 թվականին Հայաստանի ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատար (այժմ՝ նախկին) Վաղինակ Սարգսյանը այցելեց հայ-վրացական սահմանի վերոհիշյալ հատված, տեղում ծանոթացավ Ղեբեղի վարարումներից Հայաստանի տարածքի նվազելու խնդրին, որպեսզի հարցը ներկայացնի, այն քննարկվի կառավարությունում, գտնվեն լուծումներ, սակայն այդպես էլ միջոցներ չձեռնարկվեցին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալունյանին տեղեկատվական հարցում են ուղարկել՝ հարցնելով, թե 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով կամ այլ ֆինանսավորմամբ Ղեբեղ գետի ափապաշտպան միջոցառումներ նախատեսված են արդյոք: Մարզպետանի պատասխանում նշված է, որ 2023 թվականին Ղեբեղ գետի ափապաշտպան միջոցառումներ նախատեսված չեն:

ՄԱՐԳ-ՎՏԱՆԳ

Բերդ քաղաքի բազմագործառնության ջրվեժի տնօրեն Աննա Ավայանը հայտնում է, որ միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեան հատվածում Հոլվե գյուղի տարածքում, մի քանի անգամ իր վարած ավտոմեքենային է մոտեցել չափավորած, անխնամ տեսքով, հոգեկան հիվանդ մի տղամարդ և ձեռքի շարժումով սիգարետ խնդրել: Աննա Ավայանը հայտնեց, որ մի շաբաթ առաջ նույն տղամարդն անակնկալ կերպով նորից հայտնվել է իր ավտոմեքենայի առաջ, ինքը հրաշքով կարողացել է փրկվել վթարից, ակնթարթորեն հասցրել է մեքենան դուրս հանել մայրուղուց, այլապես այդ տղամարդը վթարի զոհ էր դառնալու: Տավուշի մարզի վարորդները հայտնում են, որ այդ տղամարդը, տարիներ շարունակ անակնկալ հայտնվելով երթուղի ավտոմեքենաների առաջ, վարորդներից ծխախոտ է խնդրում ստեղծելով վթարային իրավիճակ: Վարորդները նշում են, որ այդ խնդիրը վաղուց կա, ոստիկանությունը այդ կապակցությամբ պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ Տավուշ

«Օղովուրդ» օրաթերթում և Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար գանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԱՋԱՆԳ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԻ ԸՈՒՐՋ ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

Արմեն Մազմանյանի անվան բեմադրվեստի ազգային, փորձարարական «Գոյ» կենտրոնը ԿԳՄՍ նախարարության նախագծով լուծարման եզրին է: Այս մասին արդեն օրեր շարունակ ահազանգում են քառնոցի դերասանական կազմը եւ դասընթացում է ամեն կերպ պայքարել: Եւրո, որ նախարարության նախագծով նախատեսվում է «Գոյ» քառնոցը լուծարել, վարչական մասը կրճատել, իսկ ստեղծագործական կազմը միավորել Գաբրիել Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական քառնոցի հետ: Արդեն հիմք նախարարությունը նշում է, որ «Գոյ» կենտրոնը 2022թ. 3 մյն 436 հազար 990 դրամով թերի է կասարել սարեկան ֆինանսական տղանը: Բացի այդ, հրավիրված բեմադրիչների կողմից ներկայացումներ չեն բեմադրվել, եւ կենտրոնը չի համագործակցել ԿԳՄՍ նախարարության հետ եւ այլն:



«Գոյ» թատրոնի դերասան Սամվել Թոփալյանը, ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձնալով թեմային, ասաց, որ թատրոնը շարունակելու է ապրել եւ ստեղծագործել նույն վայրում: «Սա թատրոն է, խմորեղենի կամ մեկ այլ գործարանի ցեխ չէ՝ երբ ինչպես կամենան, վարվեն»: Իսկ, ահա, դերասանուհի Քնարիկ Զաքարյանն էլ ասաց, որ չի հասկանում ԿԳՄՍ նախարարության որդեգրած սկզբունքն առհասարակ թատրոններ փակելու վերաբերյալ: «Թատրոնների վերացման նախագիծն ինձ համար արսուրդային է», - նշեց դերասանուհին:

«Գոյ»-ի տնօրեն Սարգիս Չոլոյանին՝ տեղեկացնելով, որ ապրիլի 1-ից չեն պատրաստվում վճարել նրանց կոմունալ ծախսերը, եւ առաջարկելով, որ նրանք դառնան առանձին բաժանորդ: «Ինչո՞ւ պետք է Մունդուկյան թատրոնը վճարի ուրիշ թատրոնի ծախսած հոսանքի համար», - նման հարցադրում է անում Վարդան Սկրտչյանը: Նա նշում է, որ «Գոյ»-ի

տնօրենին մի քանի անգամ բանավոր զգուշացում կատարելուց հետո նոր միայն դիմել է իրավաբաններին: Ի դեպ, Վարդան Սկրտչյանի նամակը «Գոյ» թատրոնը հրապարակել է ֆեյսբուքյան էջում՝ հետեւյալ մեկնաբանությամբ: «Ներքին նրանց, ՏԵՐ, քանզի չգիտեն, թե ինչ են անում»:

ԼԻՂԱ ԵՐԻՒԱԶՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆ ՉԵՆ ԺԱՄԱՆԻ

Ճանրամարտի Ռուսաստանի եւ Բելառուսի թիմերը չեն մասնակցի ապրիլի 15-23-ը Երեւանում անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը. այդ մասին հայտնել են Ճանրամարտի Եվրոպական ֆեդերացիայից (EWF):

Առաջնության մասնակիցների նախնական հայտացուցակում ընդգրկվել էին Ռուսաստանի 38 եւ Բելառուսի 27 ծանրորդներ (կին, տղամարդ):

Ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով Ճանրամարտի միջազգային ֆեդերացիան (IWF) 2022թ. մարտին անորոշ ժամանակով զրկել է Ռուսաստանի եւ Բելառուսի ծանրորդներին միջազգային մրցումների մասնակցելու իրավունքից: Եվրոպայի առաջնությունը օլիմպիական վարկանիշային է:

«ԵՐԲԵՔ ԿԱՆԳ ՉԱՌՆԵՔ»

Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիում անցկացվող բռնցքամարտի կանանց աշխարհի առաջնությունում պայքարն ավարտելուց հետո Հայաստանի թիմի անդամ, երիտասարդների Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն Անուշ Գրիգորյանը (50 կգ) ինստագրամյան գրառում է արել:

«Երբեք կանգ չառնեք, նույնիսկ երբ քո մեղալը ուրիշն է տանում տուն (էդ ինքն էլ գիտի ու ամեն անգամ նայելիս հաստատ կլիշի) ... Հիշե՛ք՝ երբեք ոչ մի կաթիլ քրտինք հեկց այնպես չի կորի», - գրել է մարզուհին:

Աշխարհի առաջնությունում Անուշ Գրիգորյանը պայքարը սկսել էր 1/8 եզրափակից, որտեղ հաղթել էր Հյուսիսային Կորեայի ներկայացուցիչ Չոննոգ Բանին: Քառորդ եզրափակչում նա 3:4 հաշվով պարտվել էր Ֆրանսիան ներկայացնող Վասիլիա Լխադիրին:

400 ՄԻԼԻՈՆ ՀԵՏԵՎՈՐԳ

Փոփ աստղ Սելենա Գոմեսը դարձել է իգական սեռի առաջին ներկայացուցիչը, որը Instagram-ում ունի 400 միլիոն հետեւորդներ՝ մեկ ամիս չանցած այն բանից հետո, երբ նա առաջ է անցել Քայլի Զեննեթից:

Գոմեսն Instagram-ում ամենաշատ հետեւորդներով երրորդն է ֆուտբոլիստ Կրիշտիանու Ռոնալդուից (563 միլիոն հետեւորդ) եւ Լիոնել Մեսսիից հետո (442 միլիոն): Զենեթը զիջում է Գոմեսին: Նա ունի 382 միլիոն հետեւորդ:

Գոմեսը նշել է իր ձեռքբերումը՝ հրապարակելով լուսանկարներ երկրպագուների հետ եւ մակագրելով. «Ցանկանում եմ գրկել ձեզ՝ 400 միլիոնիդ»:

Instagram-ի ամենաշատ հետեւորդների տասնյակում են նաեւ Դուեյն Ջոնսոնը՝ 370 միլիոն, Արիանա Գրանդեն՝ 362 միլիոն, Քիմ Զարդաշյանը՝ 349 միլիոն, Բեյոնսեն՝ 301 միլիոն, Զլուե Զարդաշյանը՝ 298 միլիոն:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ 2023»

Ո՞Ր ՀԱՄԱՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՆԴԵՄ ԿԳԱ

«Եվրատեսիլ 2023» երգի հեղինակավոր մրցույթում Հայաստանի դասվիրակ Բրյունետ Future Lover երգով ելույթ կունենա մրցույթի երկրորդ կիսաեզրափակիչում մայիսի 11-ին՝ երկրորդ համարի ներքո. այս մասին հայտնում է մրցույթի դասնոսական էջը: Բրյունետի եվրատեսիլյան երգը հրադարակվել է մարտի 15-ին, սակայն այն ավելի քան 2, 5 մլն դիտում ունի եւ բազմաթիվ դրական արձագանքների է արժանանում:



«Future Lover-ը բանաստեղծական շնչով անհասցե նամակ է: Մի օր համացանցում ինձ ոգեշնչող մի պարզ ու գեղեցիկ գրառում տեսա. տողերն իմ գլխում անմիջապես մեղեդի դարձան ու նոր զգացմունքներ արթնացրին: Երգն այն մասին է, որ կյանքի ընթացքում մենք բոլորս փնտրում ենք այն մեկին՝ ապագա սիրեցյալին, որը կդառնա մեր երազանքների, իդեալների, վախերի մարմնավորումը», - նշում է Բրյունետը:

«Եվրատեսիլ 2023»-ը տեղի է ունենալու Լիվերպոլ քաղաքում: Համերգները տեղի են ունենալու մայիսի 9-ին, 11-ին եւ 13-ին:

● Մարտի 25-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմերիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կոշկավոր կատուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-4000 դրամ: Սկիզբը՝ ժամը 14:00-ին:





Էջը՝ ՈՂՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ կուսակցություն բացելու համար որն է առաջին քայլը: Խնդրում եմ ներկայացնել կարգը:

Արտակ Մնացականյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Կուսակցությունը ՀՀ քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձեռնարկումն ու արտահայտումը նպատելն է: Կուսակցությունը ձեռնարկվում է ՀՀ քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ: Հիմնադիր համագումարը իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն 100 հիմնադիր: Համագումարը կուսակցություն ստեղծելու առաջին քայլն է. անհրաժեշտ է կուսակցության պետական գրանցում: Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ ամետրային իրավաբանական անձի կարգավիճակ: Արգելվում է այն կուսակցությունների ստեղծումը կամ գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում կուսակցությունների ստորաբաժանումների ստեղծումը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՎՈՒՐԳ».

Արգելվում է ՀՀ տարածքում օտարերկրյա կուսակցությունների կամ դրանց ստորաբաժանումների, ինչպես նաև հիմնարկների ստեղծումը կամ գործունեությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է փոխվում կենսաթոշակի ռեալը: Հասնիկ Կարապետյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը մինչև կենսաթոշակառուի տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը: Տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմումից՝ նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է՝ կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ».

Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկին գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



Գարեգին Նժդեհի ուղեանցի՝ «Կատրեջի կամրջի» դեֆորմացիոն կարերի վերանորոգման աշխատանքներն իրականացնելիս պարզ է դարձել, որ անցումային սալերը բացակայում են, ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ շինարարական աշխատանքներ: Աշխատանքների այս փուլում ամբողջությամբ փակ է լինելու Արշակունյաց պողոտա-Գարեգին Նժդեհի փողոցի խաչմերուկից դեպի Արցախի պողոտա-Ռոստոմյան փողոցի խաչմերուկ ուղղությամբ: Տվյալ ուղղության երթևեկությունն իրականացվելու է մեկ երթևեկելի գոտիով՝ հանդիպակաց ուղղության հաշվին: Հաջորդ փուլում նույն մոտեցումը կկիրառվի հետագարծ ուղղությամբ: Շինարարական աշխատանքի ավարտը՝ 01.06.23թ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրագրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a contact number (060) 490049.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 23.03.2023

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: